Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 16-ի N 809 - Ն որոշման

Լ Ի Ա Զ Ո Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ (ԲԺՇԿԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ) ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԱՐՄՆԻ

Հայաստանի Հանրապետությունում Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների (այսուհետ՝ կանոններ) հարցերով ազգային համակարգող մարմնի՝

1) հիմնական լիազորություններն են՝

ա. Հայաստանի Հանրապետության կողմից Առողջապահության համաշխարհային կազմակերպության հաղորդակցման կետերին կանոնների կատարման ընթացքի մասին տեղեկատվության հաղորդումը (ծանուցում, տեղեկատվության փոխանակում, խորհրդակցություն, այլ հաղորդումներ), Առողջապահության համաշխարհային կազմակերպության հարցմամբ տեղեկատվության ճշտումը, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն տրվող տեղեկատվության հաղորդման համակարգումը, առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակի բնորոշումը,

բ. հանրապետության քիմիական, ճառագայթային և կենսաբանական ազդակներին առնչվող լիազոր մարմիններին Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների հարցերի մասին տեղեկատվության տրամադրումը և ստացումը,

գ. հանրապետության քիմիական, ճառագայթային և կենսաբանական ազդակներին առնչվող շահագրգիռ մարմինների հետ կանոնավոր փոխհամագործակցությունը՝ բնակչության առողջության պահպանման նպատակով երևույթների (դեպքերի), ռիսկերի առնչությամբ վերլուծություն և գնահատում իրականացնելու համար ստացված տեղեկատվության ամփոփումը.

2) լրացուցիչ լիազորություններն են՝

ա. առողջապահության համաշխարհային կազմակերպության հետ համատեղ բնակչության առողջության պահպանման նպատակով միջազգային նշանակության արտակարգ իրավիճակների, երևույթների (դեպքերի) և ռիսկերի գնահատումը,

բ. հանրապետությունում սահմանային անցակետերի հետ կապված հարցերով շահագրգիռ մարմինների հետ փոխհամագործակցության մեխանիզմների հաստատումը՝ ներառյալ տեղեկատվության հաղորդումն ու ստացումը՝ կապված օդանավակայանների նշանակման, օդանավակայանների վկայագրման, ցամաքային տրանսպորտային անցակետերի նշանակման և այլ հարցերի հետ,

գ. բնակչության առողջության պահպանման նպատակով արտակարգ իրավիճակներ հանդիսացող երևույթների (դեպքերի) վերլուծության համակարգումը,

դ. բնակչության առողջության պահպանման համար ռիսկի գնահատման գործընթացի համակարգումը,

ե. արտակարգ իրավիճակների ժամանակ պատասխան միջոցառումների կազմակերպման և իրականացման պատասխանատու հանդիսացող շահագրգիռ մարմինների հետ համագործակցությունը,

զ. հանրապետությունում տարբեր շահագրգիռ մարմիններին և բնակչությանը խորհրդատվության տրամադրումը, այդ թվում՝ նաև հիվանդությունների միջազգային տարածման կանխարգելման նպատակով Առողջապահության համաշխարհային կազմակերպության առաջարկությունների իրականացման վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրումը,

է. սանիտարահամաճարակային հսկողության և արձագանքման պատասխան միջոցառումների առկա ներուժի գնահատման գործընթացի ապահովումը, կարիքների առաջնակի և պարբերաբար որոշումը,

ը. բնակչության առողջության պահպանման բնագավառում արտակարգ իրավիճակների, այդ թվում՝ համաճարակների կանխարգելման կամ դրանց արձագանքման գործնա-

կան միջոցառումների ծրագրերին աջակցություն տրամադրելու նպատակով Առողջապահության համաշխարհային կազմակերպության հաղորդակցման կետերի հետ համագործակցությունը,

թ. Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Առողջապահության համաշխարհային կազմակերպությանը Միջազգային առողջապահական կանոնների ներդրման և գործադրման գործընթացում գնահատման, պլանավորման և կարողությունների ձևավորման առաջընթացի մասին հաշվետվությունների պարբերաբար տրամադրումը,

ժ. Առողջապահության համաշխարհային կազմակերպության հետ համագործակցությամբ շարունակական տեղեկատվության մշակումը և Հայաստանի Հանրապետության բնակչության իրազեկումը,

ժա. հարևան երկրների, Անկախ պետությունների համագործակցության անդամ և Համաշխարհային առողջապահության կազմակերպության անդամ երկրների հետ տեղեկատվության փոխանակումը,

ժբ. տեղեկատվական խորհրդակցությունների, սեմինար-խորհրդակցությունների կազմակերպումն ու անցկացումը,

ժգ. կանոնների կատարման նպատակով կենսաբանական, քիմիական և ճառագայթային հսկողության հարցերով գործունեության ստանդարտ ընթացակարգերի մշակման և գործադրման աշխատանքների համակարգումը,

ժդ. բնակչության առողջության համար ներուժային ռիսկերի, երևույթների (դեպքերի) պաշտոնական և ոչ պաշտոնական աղբյուրների հաղորդած տեղեկատվության համաձայն սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման աշխատանքների համակարգումը,

ժե. բնակչության առողջության պահպանման բնագավառում արտակարգ իրավիճակների հակազդեցության գործողությունների պլանի մշակման և գործադրման աշխատանքների համակարգումը,

ժզ. կանոնների ներդրման գործողությունների ծրագրային միջոցառումների իրականացման ընթացքի համակարգումը և քննարկվող հարցերը Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելը,

ժէ. տարածաշրջանային բազմակողմ (երկկողմ) համագործակցության նպատակով հանդիպումներին մասնակցության ապահովումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ